

տի որոշէ անսխալութիւնը հանգերձ ա-
նաթեմայով :

Փարիզ 15 յունիս
Կայսեր հիւանդութեան վրայ չարա-
զանց գրոցներ տարածուելուց, բայց կայ-
սեր առողջութեան վիճակը բնաւ վախճալու
բան մը չունի :

Վաշինկթըն 15 յունիս
Կրանթ ինքնապաշտպան Գեորգի Կոլլի-
նիտմանը երեսփոխանաց ժողովին ուղ-
ղած պատգամագրի մը մէջ՝ ապստամբնե-
րն իրեն պատերազմող ճանչելու խոր-
հուրդը կը հերքէ. եւ կը յորդորէ ժողովը
որ այս խնդիրը լրջաբար քննէ : Դախա-
ղա՛ր կը ծանուցանէ միանգամայն թէ իր
կառավարութիւնը Սպանիայէն հատուցում
պահանջներ է Ամերիկացի քաղաքացիներ
հրացանի բռնութիւնն եւ ուրիշ ամբի-
կացոց ալ ինչքը գրաւուելուն համար :

Փարիզ 15 յունիս
Պաշտօնական լրագիրը հրամանագրի-
նէր կը հրատարակէ, որոց մէջ հետեւեալ
պաշտօնաւարչութիւնները կան :

Կ. Պօլսոյ դեսպան Պ. Պետէ Եւ ինք-
պետի գեսպան Պ. Մօնթօն Երեսփոխան
անգամ կանուանին :

Պետէի այժմեան գեսպան Պ. Տըլա-
կեօնիէր զերարմար Կ. Պօլսոյ դեսպան,
Վաշինկթընի այժմեան գեսպան Պ. Բրէ-
լօ Բարաթոյ՝ Վաշինկթընի գեսպան, եւ
Պ. Արման Լիզլոյի գեսպան կանուանին :

Փարիզ 16 յունիս
Պուլժաններուն վրայ Օսմանեան քոն-
սոլիտներուն գինն է 33.50, թող, եւ տ-
որ պատճառն է Կ. Պօլսոյ Պօլսոյին լու-
րերը :

30780	Լոնտոն 17 յունիս
Բօնա. Օսմանեան	...
Նոր փոխ »	...
Պանը »	...

Փարիզ 17 յունիս	
Ռանթ Գաղլ.	73,25—73,47 1/2 յունիս
» խալ.	60,43—60,40
Փոխ. Օսմ.	4863/ 380
Բօնա. »	53,65—53,85 տար
Նոր փոխ. »	323
Պանը »	627,75
Բաշտի յունիս. »	550,

ԱՌՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԵՍԶԱՍԸ ՈՒՄՈՒՄԻ	
5 յունիս ուրբաթ առաւօտ	
բացուեցաւ	59
36	
Երկուսն գոցուեցաւ	60
05	
6 » շաբաթ առաւօտ	
բացուեցաւ	59
33	
Կէս օր գոցուեցաւ	59
28	
բացուեցաւ	59
28	

ԱՅԳԱՅԻՆ

Փարիզի Հայկազեան վարժարանի
վարդապետաց պարտքին խնդիրն այս
օրերու դարձեալ երեւան ելնելով, ե-
րէկ բաւական ժողովունը պատճառեց
Բարաքալեանի ժողովին :

Այս պարտքը որ առանց ազգին
հաճութեանն ու գիտութեանը եղած
է վարդապետներէն, եւ տոկոսը վրան
բարդուելով մեծ գումարի հասած է*,
ազգին վրայ ձգել կողմի իրեն յա-
նուն ազգին յիշեալ ազգային վարժա-
րանին համար եղած, բայց ազգը չըն-
դունիր, վրան զի իր կամքն ու գի-
տութեանին եղած չէ : Ազգը կամ
պարտքաւորանալ ոչ հրաման կամ ար-
տօնութիւն առած էր վարդապետ-
ներուն որ փոխառութիւն ընեն վար-
ժարանին համար, ոչ ալ վարկ (ըը-
ուէտի) բացած էր անոնց համար. ընդ-
հակառակն պատուէր գրած էր որ վար-
ժարանին պիտոյքներն եւ երումայից
հաշիւները հոս կազմուած մասնաժո-
ղովին զրկեն, հոսից ալ պէտք եղած
ստակը զրկուի իրենց : Այս էր ազգին
կամքը. եւ այսպէս ալ ըրած էր : Մին-
չեւ անգամ մասնաժողովին իր կողմէն
մատակարար մը զրկած էր փարիզ
վարժարանին դրամական անտեսու-
թիւնը կատարելու եւ ամէն ամիս հոս
հաշիւը զրկելու համար : Այսպէս կը
մատակարարուէր վարժարանն ազգին
կողմէն՝ մինչեւ գոյրուած վայրկեանը,
եւ այս անօրէնութեան համեմատ բո-
լոր եղած ծախքերն ազգին կողմէն
վճարուած էին : Ուրեմն վարժարանն
ազգային ըլլալէ ետեւ եղած չէր եւ

չէր կրնար ըլլալ այդ փոխառութիւնը.
եթէ վարդապետներն ընդդէմ կամեց
եւ առանց դիտութեան ազգին փո-
խառութիւն ըրած են, պատասխանա-
տութիւնն իրենց վրայ կը մնայ, ազ-
գը չճանչիր :

Իսկ եթէ վարժարանին ազգային
ըլլալէն առաջ եղած էր դարձեալ ազ-
գին չլերաբերիր : Մեր կը յիշենք որ
վարդապետներն Հայաստանեայց եկե-
ղեցւոյ եւ ազգին զրկելու դիմած ժա-
մաններին, իրենց խօսքով 30000 Փը-
րանքի չափ պարտք ունէին. այն պարտ-
քին համար քանի մը ամիսներու մե-
ջերէն հոն գտնուող թիւն մ'ըրին,
հանդուցեալ Պօլսոյ պէյ Տատեան եւ
Պետրոս աղա խորաանճեան, Գէորդ
պէյ Նրամեան, Կարապետ պէյ Նրամ-
եան, Յակոբ Էֆէնտի Նորատունկեան,
եւ այլն, ոմանք 10000, ոմանք 5000 եւ
ոմանք 3000 Փրանք տարով, եւ եթէ
չենք սխալիր, 35000 Փրանքի չափ դո-
մար մը կազմուել վարդապետներուն զըր-
կեցին որպէս զի պարտքէ աղատելով
հանդարտ սրտով ծառային ազգին
Այս վճարքն եղած ժամանակ վարժա-
րանը դեռ ազգային չէր : Ինչ պարտք
է ուրեմն ազգէն պահանջուածը, երբ
եւ ուսկից զայսցեր է : Այս պարտքա-
ները քննութեան կարօտ են : Երբ կար-
ծենք որ Բարաքալեան ժողովը կրնայ
քննել այս խնդիրը, եւ դիտութիւն
ալ ունի՝ քանի որ, ինչպէս կըլլենք,
Հայկազեան վարժարանի ամէնէն գոր-
ծունէակ տեսուչը՝ Մեծ. Պ. Ամբրոսիոս
Գալֆայեան՝ Կ. Պօլսոյ կը գտնուի :

Հետեւեալ նամակը՝ Մէտայի Հա-
ղիէթ անուն ազգուրաց թերթին
բարբաճանաց հերքում մ'է՝ բարձրա-
տիճան եւ հմուտ Հայ եկեղեցականէ
մը գրուած եւ հոս իր մէկ բարեկա-
մին ուղղուած :

Մեծարգոյ Պատն .

Թէպէտ եւ Պօլսոյ ազգային լրագ-
րաց մեծ մասը ձեռքերնիս միշտ չեն հաս-
նիր, եւ անոնց բովանդակութիւնը զըր-
բազարար չափ անդամ սոնձանթ կ'իյնայ
մեզի, ուստի եւ չենք կրնար ոչ ամէն
մէկուն ողւորն եւ ոճին վրայ ճշգրիտ դա-
տողութիւն ընել, եւ ոչ անընդհատ կար-
գաւ մը անոնց տուած լուրերուն տեղե-
կութիւն ունենալ, բայց քանի մը կտոր-
բրդուծ յօդուածներէ ըստ բաւականին
կ'ամակարեւորեմ միշտ զիստօր անցքերը
եւ ազգային գործոց վիճակը :

Մինչեւ ցայժմ անծանօթ էր մեզի նա-
եւ Մէտայը Հազարէթ անունով լրագիրը.
բայց անոր սպրիտի 22 ին տարած թեր-
թին մէկ յօդուածը տեսնելով հասկցանք
ինչ ըլլալը, եւ իր իսկ ընտրած բնորա-
նը թէ « Սմանայի ծառ իսկողոյ իւր մէ-
ծանաչի » յորդորեց զմեզ մատչողութեամբ
կարդալու այն յօդուածը, որպէս զի ող-
տուղէն կարենամք ծառն ալ ճանչնալ :
Կարդացինք համարեալ թեմաք ու հասկը-
ցանք որ Հոռութեան ազգայնոց յետմը-
նաց կամ յետաժողով մասին փշոտ ծառե-
րէն մէկուն ճճեկեր պտուղներէն է :

Յիշուի չէր արդիւն որ այդպիսի ան-
պիտան պտուղ մը վրայ խօսք ընէինք, կամ
գրէի չարմէիքը, բայց ձեռք խնդիրը կա-
տարելու ուղիով, որով կըսէք որ մեզի հա-
մար ամօթ չհամարենք ինչ հաղորդենք
ձեզի մեր այս յօդուածիս վրայ առած
զաղարկները, նախ այս կողմէն ընդ-
հանրապէս թէ՛ չկրցանք հասկնալ որ
բուն յօդուածը որով զէմ ուղղուալէ, մի-
այն քանի մը լրագրաց, թէ բոլոր Արեւ-
ելեան հայ ըստող կաթոլիկաց, թէ նաեւ
մեզ Հայոց, թէ նաեւ բոլոր աշխարհի . . .
Հասկցանքիս այսչափ է որ այդ յօդուա-
ծին հեղինակը կատարելի դադարի մը պէս
մէջ տեղն ինչպէ՞ս ամենուն զէմ կ'ողտայ
կողմէն, ամենուն իրայ կարծիքի կ'աճա-
տէ : Կերեւի որ խնդրին ներառիլին հրդեհ
մը բռնկուի. արդիւն փորձու աղիքներուն
մէջ անասնելի էրեցք մը ունի (զուցէ
իրեն դաւանակից աղատամիտ Հայերուն
այս միջոցիս ըրած դարձանալի քաջու-
թիւնը) . ուստի որտե՞ս պտուղ արնուելով
պտուղով կանչու ըստեղծու ալ մէկը մէկա-

լը խաճխոյնով՝ սրտին կրակը կողմէ ան-
ցնել :

Արեւելեան կաթոլիկաց ծառին առա-
ջին պտուղ կ'ամարին նա Մէծմուտն, Ման-
դուէն, Օրագիրը, Մամուլը, եւ անոնց նը-
մանները (վէ էմալլէրէ) : Մէտային այս
խօսքը սրբան ճշմարիտ ըլլալը չեմ կըր-
նար դիտել, բայց այս յայտին է որ ին-
քը Մէտան՝ յետ « Միսթարեան Վենետի-
կոյ » անուանեալ պարսաւագրքին՝ առա-
ջին պտուղն է յետաժողով պաշտպանու-
թեան, եւ Հասունեան կատարութեան :

Մէտան վերոյիշեալ լրագիրները՝ չեմ
զիտեր ինչ պատճառաւ՝ Աստուծոյ մեր
ազգին տուած մէյմէկ ամենամեծ պա-
տիճները կ'ամարի, արդեօք անոր համար
որ անոնք ազգասէր եւ ընդհանրապէս
արգարասէր ու անկողմնասէր ողւոր կը-
գրեն ինչ որ իրենց խղճին ու մտածութե-
անը ուղիղ եւ ազգիս յառաջադիմութե-
անը օգտակար կերեւեալ : Դիտելով թէ
անոնցմէ ոմանք իրենց դատողութեանը
մէջ երբեմն սխալին, հապա ինքը Մէտան
արդեօք ուսկից եւ Երբ առերէն անսխա-
լութեան շնորհքը, մինչդեռ Պիոս Բ. իւր
ժողովին մէջ իսկ կաթոլիկոսներուն մեծ մա-
սէն անգամ մինչեւ ցայսօր չէ կրցեր առ-
նուլ այդ շնորհքը ունենալու վկայակա-
նը, եւ մինչդեռ Մէտային այս իսկ յօդուա-
ծը ծայրէ՛ ի ծայր լեցուն է ամէն տե-
սակ ստույթեամբ ու սխալներով : Օրինա-
կի համար .

Կ'անշուշտ Մէտան՝ թէ մեր հա-
ւատքին մէկ մասն է (Տիմոթիոսի պիւր
շարքը) որ եւ ինչ իշխանութիւն
ճանչնալ իրեն յԱստուծոյ, եւ Օսմանեան
տէրութեան ազատական մէկ յայտարա-
րութիւնը մէջ կերէ. բայց ինքը դարձ-
եալ քանի մը խօսքէն ետեւ յայտարարէ
կ'ազատակ, կ'արանջայ որ Հասունեան
կուսակցութիւնը բաւական պաշտպանու-
թիւն չգտնիր Օսմանեան տէրութեան
կողմանէ : Մեր ալ այսքան արդիւնաւ
քաջանայից մեր եկեղեցիները մանկուն
բոլորովին արդեօք զրուհուեն անկարելի
եղածը՝ պատիւ չէ ու ինչ է. (Պիղիմ տէ
պունճա արդիւնաւ քաջանալարն քիւր-
սէիքիւնիդ տոկոսով իմ մէջէն ինչ թէ-
միւն մէն խալէմէ միւս զաղէպ տէյիլ տէ
նէ ար) : Կարծելի կ'եղծաւորութիւն :

Անկէց կ'առնայ յանկարծ ձեռք
կառնէ Հրեաներուն կամ Հոռութեանցինե-
րուն իրենց նախնեաց առաքելութեամբ
պարճենալուն նման յիմարական պարճնե-
կատութիւնը : Գիտե՛ք մենք որ ինք կըսէ
1828 ին եւ 1829 ին հալածանք քաջող
կաթոլիկներուն որդիքն ենք կ'ողտայ. ոչ
այն կըսէ թէ ոչ էր կամ ինչ էր այն հա-
լածանքին պատճառը, եւ ոչ այն թէ ի-
րեն ինչ օգուտ կամ ինչ վնաս եղեր է
այն հալածանքէն. ուրեմն ինչ ընել կողմէ
այդ սուտ պարճանքով : Յետագայ խօս-
քերէն այնպէս կերեւի որ միտքը այս է՝
թէ այն հալածանքը կաթոլիկներուն քա-
ջել առողջները նման են եղեր զՔրիս-
տոս ի խաչ հանող Հրէից, եւ զՊատրոս
զիւլիկար խաչող Հոռութեանցից . ուստի
կըսէ, անհաշուելի օխ եւ թշնամութիւն
այնքն է ունենանք Հրէից եւ Հոռութեանց-
եց զէմ, եւ ոչ թէ Հրեաները կամ Նե-
րոնք պաշտուել, Գիտելու բան է Մէտա.
ին հոս բանեցուցած աղուսաբարոյ ըզ-
դուութիւնը, որ « Հոռութեանցիները կամ
Հոռութեան պապը չպաշտուէ » ըսելու տե-
ղը՝ Ներոնը մէջ կերէ : Ասկից աւելի
ներելի է Մէտային թեմաք տղիտութիւնը,
որով այն խօսքին ետեւէն անմիջապէս
կ'արէ զինով մարդու պէս թէ « Հապա
պէտք է պաշտենք զիսալեւելեան Քրիս-
տոս, եւ ինքզինքը գլխատել տուող » .
որով Պատրոս առաքելը կ'իմրու եւ
Պօղոսը կըսէ ընդէն :

Անուշախտեւ Մէտային կատարութիւնը
աւելի կ'առնուանայ, կ'սկսի գոհակալան
յիշոցներով ու հայոցանքով կանչու ըստեղ
Մանդուէն, Օրագիրն ու Մամուլն զէմ
(այս անգամ Մէծմուտն դուրս ձգելով),
թէ « Զուր ինչպէս կ'համարձակիր ամե-
նէն մեծ եկեղեցւոյն, եօթնամասունուեր-
կու ազգաց իրենց զուլու ճանչցած քա-
հանայապետին զէմ այդքան նախատինք-
ները զրկելու » . աղայական ու պիգալի
թիւթեամբութեամբ կ'արէ պապին պա-
տուանունները, Մէծմուտի առաջին կար-

զի նշանն ունենալը, « Լէփօն տ'օնէօրի
քօմանտէօր » ըլլալը եւ այլն եւ այլն. եւ
կ'անշէ Մէտան թէ այդպիսի անձի մը
զէմ պարտաւանք գրելը ոչ ապարէն սար-
սափելի պատիւ պատուհասի է. (պիւր չե-
տիտ զաղէպ տէյիլ տէ նի տիւր) : Հարցը-
նեւ թէ որուն է այդ պատիւը, պապին,
որ այսպիսի պարտաւանքուն հաղար ու
մէկ տեսակը լսեր է ու կ'սէ ամեն օր
Եւրոպայի ամեն կողմերէն եւ ամեն բնա-
կիչներէն (քէօն տիւրնիւն), թէ ձեզի
պէս կ'ողր ու տղայամիտ պապականաց,
նոյ մէջիլ Մէտայ, որ եւ ոչ ան զիսեւ
թէ զաղէպտէն Սա-էն փօթիք խօսքը
ոչ թէ պապին հոգեւոր եւ մարմնաւոր
թաղաւոր ըլլալը կ'անապէս, ինչպէս որ
կարծես, հապա միայն հոգեւոր իշխանու-
նութիւնը. վրան զի Սա-էն բառը գո-
յական չէ հոս, եւ չընչանակիր թաղա-
ւոր, հապա ամական է փօթիք բառն,
եւ երկուսը մէկէն կ'ընչանակիր դերադոյն
քաջանայապետ, ինչպէս որ կ'կոչեն այժ-
մու չորդորթ Հոռութեանցի զպապը,
հետեւողութեամբ նախնի հեթանոս ըը-
ոռութեանցից, որ այդ դերադոյն քաջա-
նայապետ անունը կուտային իրենց ըըր-
մապետին, բայց Մէտան այդպիսի զանա-
զանութիւններ ընելու չափ խելք ու տը-
րամարտութիւն ունի արդեօք. — չենք
կարծեր. — ասոր ապացոյց, անա կ'ընտալ
յանկարծ կ'ընտալ բերանը բոլոր Հայոց
ազգին զէմ, կ'կանչու ըստէ իւր ոստիւնե-
րուն որ ազգին ետքի երկուսարկու տար-
ուան անիշխանութեան ժամանակի պատ-
մութիւնը կարդան, ու մեր եկեղեցական
նաց ոմանց պապատմութիւնները յիշելով
անով իւր թէ հասկնալն ազգին ու եկե-
ղեցւոյն նուազութիւնը համեմատու-
թեամբ հոռութեան եկեղեցւոյ Չիտեր
ողորմելին որ եթէ խելքի յարմար բան
ըլլար այսպիսի նիւթերու մէջ « ի մասնա-
ւորաց ընդհանուրն ձեռնարկելը », կար-
ծէր իրեն աչքը խալիլ պապերուն ոչ թէ
երկու հարիւր՝ այլ հազար վեց հարիւր
տարուան անասնելի անկարողութեանց
պատմութիւնը, եւ Աղեքսանդր Պօրճիան
եւ անոր նմանները, նմանապէս Պիոս Բ.
եւ անոր նմանները, ամենքն ալ մէկ չու-
անէ կ'սկսել : Մենք այդպիսի ստույթու-
թիւն չունինք :

Այն ալ կ'իմրու մեր Մէտանի Հազը-
ղէթը, երազ տեսնող ու յանկարծ արթնը-
ցող Թիւրքալի մը պէս կ'կանչու ըստէ .
« Են տիւր սիւլին ուղղափառազ տէյիլ պա-
ղրաղընը զիւլիւնէին ուղղափառընը
այսինքն ինչ է ձեռ ուղղափառ ենք ըսե-
լով կամ չուրոտած եկեղեցիներուն ուղ-
ղափառութիւնը » եւ այլն, եւ այս աղի-
տական ու անվայել հարցմունքներն այն-
պիսի անձոնի հակաճառութեան խօսքե-
րով կ'ընտալ զարդարել, որ միայն հաստա-
ղուես ինչ դադապացւոյ մը բերին կ'աղ-
լէ, եւ որոց մի առ մի պատասխան տա-
լը անտարակոյտ անելի մեծ անպատու-
թիւն կ'ըլլայ մեզի՝ քան թէ նոյն իսկ Մե-
տանին ըրած հայոցանքները, Մանուսեղ
որ մանի ընելու միտք չունի. ընելու ալ
ըլլային՝ խօսքերնիս հասկնալու կարողու-
թիւն չունի ողորմելին :

Այս անկից ալ յայտնի է որ առանց
պատասխանի պատասխան, « Աստուծոյ ալ մէկ-
զի թողուք, կ'կանչէ, ու կը դառնայ
կ'արցնէ թէ » ուրիշ մը քրիստոնէայ ե-
կեղեցին զձեզ ուղղափառ կ'անշանայ
(չոռանք որ խօսքը դարձեալ Մանդու-
մէն, Օրագիրն ու Մամուլն հետ պիտի
ըլլայ) : Կաթոլիկը, կասէ, հոռութեւ, բողո-
քականը. — եւ իւր թէ չափ հարկաւոր
բան մը ըլլար այն լրագրաց օտար աղիւ-
րէն իրենց ուղղափառութեանը տիւրիւ
կամ պէտքով ունենալը, Մէտան ինքզին-
քը անշուշտ անտէնէն եկած (խօսքընա-
մը) խաբաճիկի մը տեղ զնելով՝ կ'կան-
չէ. « Եւ հոս, պունդարն պիտի ալն էրմէ-
նիւնիւն քիւլիւնի ուղղափառար տէյիլ
պիւր իմալը մէրբամի քեհնա կ'օսթէրին
ասոնցմէ մէկէն Հայոց եկեղեցւոյն ուղ-
ղափառութիւնը ցուցնող վաւերական ու
պաշտօնական թուղթ մը ցուցուցէ » :
Դիտելով թէ մենք ալ ինչ ատենի խաբաճ-
կիւղարներուն պէս հանէինք ծոցերէն
Մէտանին ուղած խաբաճիկ թղթերը միայն
չէ, հապա ամբողջ տեսարաններ, զրքեր,
մատեններ, ամեն ազգէ եւ ամեն լեզուէ,
թափէինք առջեւ, արդեօք ինչ պիտի

* Խաճխոյն նախելով 400,000 Փրան-
քի կը հասնի եւլեր :

բախր Սէտան—լին ու դարձաւ իր . « Պիղ
հէր աշտոյնի վերաբերեալ կէտերն ալըրբեղ »
կարգաւ վերահանու թեամբ, այսինքն մենք
ալ լուրջ բաժնիս ետ կառնուիք » . Ո՞վ
սղարկուի, քիչ ըսելու ետ որ ետ պիտի առ-
նուս, բայց եթէ յիշուցը, հայհոյանք, եւ
ամէն ահապ կատարու թեան աղճա-
տանք, ասանք ետ առնուս չառնուս ար-
դեն ամէն մարդ գիտէ որ ըսողին գլխուն
կգողանան միշտ, զորօրինակ թու բանեցու-
ցած յիշողներդ, արտը, ասանք քիտաւ,
հերետիկոս, ու թանկաւ արքանազ, հիմի-
յաթ ետաղճը, սէֆիլ, ահապ, չնացող,
մարդաստան եւայլն եւայլն, Սէտային յո-
ղուածին մէջ ասանքով զոտ մէկ խելացի
խօսք մը չենք տեսներ որ արժան համա-
րէինք պահանջել որ ետ առնու :

Բայց դու ահա թէ Սէտան որքան դո՛ւ է
իւր պերճախօս ճարտասանութեան ու ան-
յողթիւն տրամաբանութեան վրայ : Այն-
չափ հայհոյանքներէն ու փճախօսութեան-
ներէն յոգնած « աղբը » վերջապէս կը
շարժուի : « Եւ արդ սի պատուք ա-
րեւելեան եկեղեցոյ եւ արեւելեան կա-
թոլիկացի, դիպցած ըլլաք որ մեր քովն ալ
խօսք պակաս է : « Այդպէս լազրաբը հօգ
տեղի տիր » . եւ այսօրուան դրածին
փոքրիկ ճաշակ մէն է : բուն « պիտի »
եւտես է : « Վէ պու կիւնքի ետաղճա-
բը մը պիտի քիչ-չիւք նուսնեն տիր, Վէ
յոյուսուս կիւնքի տիր » . Չհարցնէ մէկը
թէ արդեօք այդ պիտի բաները որքանք են
որ « Սէտան » միտք ունի անոնցով զմեզ
քարկծելու : Ահա անմիջապէս կրկնած
խօսքներն ալ յայտնի է : Կաթոլիկներուն
130 կամ 200 միլիոն եղածովը պարծե-
նալ, ասանց գլխաւոր որ աշխարհիս ե-
րեսի կապալաններն ալ 300 միլիոնէն ա-
ւելի են, բայց դարձեալ կապալան, ինչ-
որն որ « Սէտային » հետեւող յետադիւ-
պապականներն ալ մարդաստան Պապին
կարծեցեալ մեծութիւնը, խախտեալ եւ
սասանեալ իշխանութիւնը, աշխարհային
եւ անոր փառքը գովել բարձրացնել, ա-
ռանց անոնց մօտալուս կործանուիլ ահա-
նուս : չափ որ աչք ունենալու : Ահա ան-
եալ տիեզերական ժողովին եպիսկոպոս-
քը բազմութեամբ եւ գիտութեամբ
պարծենալ, ասանց գլխաւոր կամ յիշե-
լու անոնց մէջ հիմախօսնէ ծաղած սոս-
կայի կիւնքն ու երկրպագութիւնն
ը, եւ վերջապէս անոնց գիտեցը մեր ազ-
գին այժմու իրական կամ երեւակայեալ
պապականութիւնները հանելու ջանալ, առ-
անց անոնց արտաքին պատահական պատ-
ճառներն անդամ հասկնալու :

Մեծարգոյ Պարոն, երբոր ասկէ աւելի
մը առաջ եւրոպական լրագրաց մէջ կը
կարդայինք թէ Տաճկաստանի շայ — կաթո-
լիկացի « տասնին ինը » մասը ազատամտաց
կողմնէ անցելու, հաւատարմեան չէր դար-
կան զի չէինք յուսար որ ազգային հո-
գին անցնան արժեքնաւ ըլլալ այդ ժողո-
վրդոյ մէջ : Կարծէինք թէ Գեր. Հասունի
երեսնամեայ քրտնաջան աշխատութեամբ
ըլ՝ պապական յետադիւսութիւնը շատ կու-
սակիցներ վաստակած է : զոնէ Պաշտոյ մէջ
զոնէ Գաղափարները կըլարաց մէջ ուսուի կը
սէինք թէ անապաղիտ չեն պակսիր մէ-
ջերէն այնպիսի մարդիկ ալ, որ իրենց
ոսկրներուն դէմ կարենան չենքով չնորհ-
քով երկու խօսք մը ըսել կամ գրել : Բայ
հիմա կը տեսնենք որ յիշուի « ասանքի
երեսնամեայ » միայն մնացել են Գեր. Հա-
սունին ետեւէն դնացող, եւ « Սէտային »
պէս ողորմելի փառաբանին մը կարօտ
Ուստի կարծէ որ մենք ալ նոյն « Սէտային »
հրաշտի վերջաբանութեամբ վերջացնենք
այս մեր համաբան խորհրդածութիւնը, եւ
ըսենք իրեն ու իր Գաղափարները ընկեր-
ներուն : « Պատասխանք հազուանից, մո-
խիր ցանկեցէ գլուխից, լացեք ողոր-
ցեք ձեր խելովութեանը վրայ, ով ողորմե-
լիներ : Ո՞վ Հասունեան կաթոլիկներ, դուք
ալ « Սէտային » պէս փառաբանի ձեռ-
քով զատաստան պիտի վաստակէք, ու այդ-
պիսի յիշողներով, հայհոյանքներով ու ար-
բաղըմութիւններով ձեր եկեղեցին պիտի
պահպանէք հմ. վնջ ձեր գլխուն . . . ձեռ-
դի Աստուած ասկից մեծ պատիւ պատու-
հասի չէր կրնար տալ : Եւ աղանդը եր-
թու Վէ պաշտօնաւ քիւս սէֆիլիդ, հալի-
նիլի աղաւթաբանը, սէֆիլիդ, սէ-
ֆիլիդ : Սիդ տէ Հասուն դաթոլիկներ, Սէ-
աւ կիւնք աշտոյնի իւր տալա դաղանդ,

պէտքէ քիւս քիւս, հիմիլէր, վէ արաւաղ-
ծութիւնը իւր քիւս քիւսի պարաճաղ-
սննդ, վնջ սիլիլի սիլիլի . . . սիլիլ
Ալլա՛ թաղալ պուստան պէտքէ պիւր դա-
ղէպ վէրէմէզով : »

* * *

ԽՐԻՍՏԻԱՆ ՀԱՅՐԻՒՆ ԵՒ ՄԵՈՅ ՎԱՐԳԱՊԵՏԻՐ
(Հարաւարդութեան Բէն 978)

Վարդապետ նամակագիրը կրտէ-
« Խրիստեան խոտաւաւ վանքն ու տա-
րօնոյ աշխարհ Սահմանադրապէս կա-
ռավարելու ինք սահմանադրութիւնը
անսահմանադրութեան մէջ թաղեց » :

Սրբաբուն խրիստեան խոտաւաւ եւ
ամիսներ պարապեցաւ ի Պօլիս, Գլխալ
վանուց բարեկարգութեան համար ծը-
րադիր մը պատրաստեց եւ զայն վա-
ւերացուց Ազգային վարչութեան : Եւ
դառնալով ի Ս. Կարապետ շատ աշ-
խատեցաւ ըստ այնմ վանքը բարեկար-
գելու բայց ի զուր. այնպիսի միաբա-
նութիւն մը որ մինչեւ այն առնէն ա-
ղաւ համարձակ ուսուի խմբը նստել
կանգնելու վարժուած անուս եւ ար-
դէտ մարդիկ էին, զանոնք այնպիսի
օրէնքի մը ենթարկելու ամեն մարդ գի-
տէր եւ կ'գուշակէր որ պարապ բան
է : Խեղճ Հայրիկը ո՛րչափ անդամ միա-
բանութեան անապուշտ եւ նա-
խատուեցաւ իր այս բաղձանաց համար
եւ անդամ մի սրօք եւ բրօք ձեռնու-
լով իր ձաղկերով մէկտեղ արտաքուսե-
լով վանքէն՝ հաղու սպաննուիլէ ճո-
ղալու ալ չունչը կարին տուաւ : այն
առնէն ալ խրիստեան պարտաւորեցաւ
ստատաւախմիլ : Իր խումբը ցրուե-
ցաւ, դպրոցը դոցուս, եւ վանքին ա-
մեն անօրէնութիւնը մնաց միաբանու-
թեան ձեռք : Ըստ իրենց բաղձանաց
Այս պարագաները իրենք անշուշտ
լուս կը յիշեն քան զմեզ : Խրիստեան
Հայրիկը այսպէս վանքէն հարած ելէն
եւ դպրոցը երեսի վրայ ձգեցին զինի,
միաբանութիւնը իրեն մէջէն գլխե-
մալ Լօր. քոյ կարապետ անուն վարդա-
պետը փոխանորդ : Կարգեց եւ խորէն
վարդապետը դպրոցին վարժապետ,
բայց յայտնի բան որ իշխանութիւն
բաժանեալ յանձն կործանի. այս կեր-
պով ալ զարձեալ հանդարտ չ'կեցան
քանզի այդ դարամը երեսնէն տիրել
եւ իշխել վանուց : այսպէս խռովեալ
եւ երեսուն քաղցին առնէն մը մինչեւ
ուրիշ դէպքեր յաջորդեցին : Խրիստեան
այս խառն պարագայից մէջ յուսա-
հատեալ վանքը բարեկարգելէ, ձեռ-
նարկեց այնուհետեւ Մշտ աշխարհի
տղապետ հարաւարտեալ վիճակը բա-
րեկարգելու :

Վարդապետ նամակագիրը կրտէ-
« Խրիստեան Ս. Կարապետի գերեզմա-
նը քակեց, եկեղեցին չընկեց եւ արծ-
ուածէս արձան մը շինելու մեղ պաշտել
տալու նկատմամբ » :

Երեւանի բողոք. խրիստեան Ս.
Կարապետի գերեզմանին վրայ դըր-
ուած խորտաբող մէկ քարը իրաւ է
որ վերցուց ու անոր տեղ ընտիր եւ
կերթ ճաշակով ուրիշ փոքրիկ քար մը
դրուաւ : նոյնպէս եկեղեցին նորոգեց կամ
չընկեց : Կ'հարցնենք այդ վարդապետին
թէ ինչ յոյնացի է եղեր յիշեալ չ'ն-
քերը քակել ու նորոգել, թէ պէտ կը
հասկնանք իրենց ըսածը որպէս թէ
ասով մեր բարեպաշտ ժողովրդեան
դէշ դաւախար մը տալ կուզեն խր-
իստեան Ս. Կարապետի գերեզմանը
քակեց անդամ : Բայց, տխուր մար-
դիկ, ըսելով մը կարգացէք Ազգա-
յին պատմութիւնները, նայեցէք թէ
ո՛րչափ Լուսաւորչաչէն տաճարներ
վերջէն ուրիշներու ձեռամբ նորոգ-
ուած ու շինուած են : Ինչպէս է Ս.
Էջմիածնի տաճարը, Հոլիվուսի մի-
անձնատնիկաց տաճարը եւ այլն : Իսկ
այն որ կրտէք թէ արծուածէս արձան
մը շինեց մեղ պաշտել տալու համար,

ասոր վրայ չեմ ուզեր խօսիլ, կ'ըստեմ
որ ինք երցողք դատեն այս հակամարդ-
կային խղճի ու ազատութեան վրայ
բռնանալու մասին խրիստեանի վրայ
ըրած անդուռն բերանով հայհոյու-
թիւններ :

Ինք երցողք, կարծեմ կրցայ բառ-
կան հասկնալու ու հաստատել յիշեալ
վարդապետաց Հայրիկի դէմ բողոքած
եւ ցմահ բողոքելիք անհիմն եւ չարա-
շուկ զբարանութիւնները :

Ս. Կարապետի վանքը կարնոյ մեր-
ձակայ ըլլալով խիտ աղէկ գիտեմ ա-
նոր անցեալը ու ներկայն : Ս. Կարապետ-
ի վանքը 18-15 տարեկ մ'ի վեր-
երէք աղգին օգուտ կամ ծառայու-
թիւն մը ըրած չունի մինչեւ ի վանա-
հայրութիւն Հայրիկին, յորում դարձ-
եալ վերջոյն աղանդաբէր պատ-
ճառաւ զգալի ծառայութիւն մը եղած
չէ աղգին իր մէջ դառնուած քնուտ քն-
դէտ եւ մարմնապաշտ վարդապետաց
երեսէն : այնպէս որ Ս. Կարապետի
վանքը աղգին ծառայութիւնէ բոլոր-
վին մեկուսացեալ իր միաբանութեան
ծառայելու դրոյ հասած է : այս վատ
դիրքը բարեկարգելու համար հան-
գուցեալ վանքէն Պատրիարքի պատ-
րիարքութեան օրէն մինչեւ այսօր աղղը
միշտ աշխատած է, բայց բոլոր իր աշ-
խատութիւնները ի դերեւ ելած են :
Երկրորդը հանգուցեալ Մատթէոս
առիւծ անման վարդապետը հոգեւոր
Յակոբ արքայանի պատրիարքութեան
առնէն Ս. Կ. վանքին առաջնորդ կարգը
ուսցաւ, եւ անձանիւր աշխատե-
ցաւ վանքը բարեկարգելու, բայց վեր-
ջապէս միաբանութեան թերաբու-
թեամբ իր կենաց վրայ սպանման համար
եղած մէկ քանի փորձերը պարտաւո-
րեցին զինքը ոտից փոխել թօթափելով
հրաժարելու : 1853 ին կարնոյ ի լոյս
հանգուցեալ Պոստեցի Գրիգորիս սըր-
բաղան արք. եպիսկոպոսն առաջնորդ
կարգուեցաւ վանքին : Բայց նա եւս
չ'կրնալով բարեկարգել զայն՝ պարտա-
ւորեցաւ հրաժարիլ : Անկէ վերջ երկու
կառապետ վարդապետներ եւ Զաքա-
րիա վարդապետ մը յաջորդեցին իրարու
ետեւէ, որոց առաջին կարապետ վար-
դապետը տարի մը զինի իր առաջ-
նորդութեան մէջ վախճանեցաւ : ասոր
յաջորդեց Զաքարիա վարդապետը որ
ընիկ վանքին միաբանն ըլլալով ժամա-
նակ մը վարդապետաց հետ յարմարե-
լով յարստեւեց, եւ զոր աղղը փոխե-
լով անոր տեղը առաջնորդ կարգեց
կենարացի կարապետ եպիսկոպոսը : այս
ալ 1-2 տարի առաջնորդութիւն վա-
րեցին զինի լալով ու ցաւօք հրաժարե-
ցաւ : ասորմէ զինի Ս. Հայրիկին յանձ-
նուեցաւ վանքին առաջնորդութիւնը :
Նորին սրբազնութեան ալ կրած բաղ-
մալիչա նեղութիւնները արգէն վե-
րը պտտեցին : այս յաջորդական առաջ-
նորդի փոփոխութեանց միջանկեալ
պատմութիւնները երկար ըլլալուն չու-
ղեցի գրել :

Յետ այս ամենայնի իբրեւ աղգա-
յին անհատ եւ նոյն ուխտին բարեկար-
գութեան նախաձեռնող իր՝ կ'ըստեմ
յիշեալ առաջակ վարդապետաց դէմ՝
ընդհանուր աղղին եւ քաղաքական
պատկառելի ժողովին, որ բարեհաճի
ու շտապութեան առնուլ այս պարագա-
ները եւ օր յառաջ նոյն վարդապետաց
նոր օրինակ յանդուգն եւ լի զբաղմուն-
թեամբ ու թշնամանք Ս. Հայրիկին
դէմ ժայլ. քած հայհոյութիւններն ար-
ժանաւոր պատմութիւնով վարժապետէ, որ-
պէս զի երկրորդ անգամ զգուշանան
խրիստեան Հայրիկի նման Առաքելին՝
պարզ աղղութիւն՝ եւ անշահասէր հայր
մը զբաղմունքն ու միտքն : Մշտ Ս.
Կարապետի վանուց պէս հարուստ եւ
աղղին յառաջադիմութեան ծառայե-
լու ամենէն շատ յարմարութիւն ունե-
ցող հաստատութիւն մը ի՞նչու համար

այսպիսի քանի մ'առաջակ վարդապե-
տաց երեսէն այդպիսի դրոյ մը հասնի :
Վերջացնեմ նամակս . . . Խմբագիր-
վերջնական կերպով ծանուցանելով բո-
լորաբար վարդապետաց, որ եթէ
դժբաղդաբար աղղին՝ անտարբերու-
թեանէն քաղաքական պատկառելի ժո-
ղովին անհոգութեան եւ Ս. Հայրիկի
բնածիր ներող անյիշատարութեան օ-
գուտ քաղելով անպատիւ մնալու ըլ-
լան, եւ որով պատրաստուին նորոնոր
զբաղմունքութիւններ եւ հայհոյութիւն-
ներ եւս ժայլ. քաղաքական եւ հա-
սարակաց սիրելի չօր մը վրայ, մեք ալ
ըստ խղճի եւ ըստ ճշմարտութեան
գիտեցած եւ այն մասին ունեցած տե-
ղեկութիւններովն զանոնք հերքելով՝
հետեւաբար պիտի պարտաւորուինք մեր
իրենց վրայ գիտեցածնիս հրատարակել
ի լուր հաստատութեան :

Աւերդը չեմ համարիր նաեւ հա-
մառօտ մը գրել հոս Հայրիկի այս մա-
սերուն ունեցած անդին ծայր անյիշա-
տարութեան եւ համբերատարութեան
վրայ, ոչ այնչափ գովելով զայն ըստ նա-
րեկացոյն թէ միայն մասնէն կո-
րծատեան եւ զղջալն ու ժգնապէս եւ
մեղանչելն մոլեղնաբար :

1870 Մայիս 30

Ի Կ. Պօլիս

Ս. Խաչէն
Կարէն

. . . Խմբագիր .

Հետեւեալ նամակը որ Սահմանադ-
րութեան այս տարուան տարեգա-
ձին ի նպատակ Ազգային Հիւանդանոցի
չողեմաւ մը վարձող մասնաժողովին
կողմէ ստացաւ հոգաբարձութիւնն :
հաճեցէ հրատարակել Զեր պատուա-
կան լրագրոյն միջոցաւ : Յիշեալ մաս-
նաժողովը մեծապատիւ Սեդալի ինչ-
պէս ժողովուրդն ալ կը վկայէ, ամեն
աշխատանք եւ դժուարութիւն թէ
աղգայնոց հանդատութեան եւ թէ
յօդուտ հիւանդանոցի յանձն առին,
ու ժողովուրդեան ընդ նմին եւ հո-
գաբարձութիւնն մասնաւոր շնորհա-
կալութիւնը գրաւեցին : Եւ թէ ժա-
մանակ ժամանակ այսպիսի աղջտեւ
անձինք ընկերութիւններ կողմէն ի
նպատակ հիւանդանոցի, որպէս զի աղ-
ղին խնամոց կարօտ անձինքը ապրին
աւելի բարեկեցութեամբ :

Մըդ . . . Խմբագիր . հոգաբար-
ձութիւնն կրկնելով իր շնորհակա-
լութիւնը այս անգամ կազմուած մաս-
նաժողովը Մեծ. անդամոց, կը յայտնէ
թէ նորին շնորհիւ դոյացած (ողջ ըս-
տակ) 7370 դուրմէ շահք ստացաւ .
եւ եթէ այսօրէն դարձեալ նոյն մաս-
նաժողովը հիւանդանոցին կալուած մը
գնելու խորհուրդը առաջ տանիլ յան-
ձնն առնէ, ինչպէս որ փախուք յայտ-
նած է իւր նամակաւ : Կրկին շնորհա-
կալ կընէ զհոգաբարձութիւնն :

1870 յունիս 3

Սեդ. Հոգ. Աղգ. Հի-

նոր խան Թ. Գ

գրասեն. հիւան.

(ԿԵԿ)

Մասնաժողովը նամակին հրատա-
րակութիւնը յաջորդ. թուով :

Նաւը—Գաբու 4 յունիս 1870

. . . Խմբագիր .

Բարեհաճեցէք լրագրոյդ միջո-
ցաւ հրատարակել Նպատաւաւորաց
ընկերութեան Ազգային Սահմանադ-
րութեան տարեգաձին առթիւ վար-
ձած շողեմալին հայելու :

Ծախուած տոմսակ 1000 276 հատ
ողջ ստակ 2760

» » 5 նոյն 65 հատ 325

3085

Ծողենաւի վարձք 1350

Այլ եւ այլ ծախք 374 1724

Մնացեալ շահ 1361

